

— «կմիւած կառախումք» — եւ յաղ-քանակեց բռնութեան ու արտաքին ազդակների աջակցութեամբ։ Բոլշեվիզմը եկաւ իրեւ հսկայեղափոխութիւն, — արտաքին սիմեների օգնութեամբ խորտակեց յեղափոխական իշխանութիւնը եւ բռնութեամբ պարտադրեց իր կամքը։ Եւ այս 20 տարւայ ըմբացքում բոլշեվիզմը տիրել է հակառակ ժողովրդի ննջիչ մեծամասնութեան կամքի եւ հակառակ Ռուսաստանի ընկերային տնտեսական պայմանների քելադրանքի, սույ մերկ բռնութեան վրա յենած։ Հետեւարար, բոլշեվիզմը չի կարող չնկատել «արդիւնք Ռուսիոյ նընշած դասակարգերի եւ ժողովուրդների տառապանքների», այլ՝ արդիւնք պատերազմի ստեղծած հիւանդագին պայմանների, արտաքին ուժերի միջամբ տուրեանց եւ ներքին բռնութիւնների։

Այս է եղած եւ այս է Դաշնակցութեան ըմբառումը բոլշեվիզմի մասին։ Այդպէս է հասկացւել բոլշեվիզմը խորհրդային իշխանութեան առաջին շրջանում, այդպէս է հասկացւում եւ այժմ։ Աւ Շահխաքունեանից ու Վ. Խորենից սկսած մինչեւ Մ. Վարանդեան՝ այդպէս են ըմբռնել ու ներկայացրել բոլշեվիզմը։ Նոյն իմաստն ունի եւ Հ. Յ.

Դաշնակցութեան գերագոյն ժողովների բանաձեւերը։ Հիմա առաջարկում է նոր ըմբռնում — բոլշեվիզմի արդարացումը...

Սա մի փոքր է Հ. Յ. Դաշնակցութեան բոլշեվիզմի մասին ցարդ ունեցած վերաբերումի վերագնահատութեան — սխալ քէ ըստ ձեւի եւ քէ ըստ էութեան։ Ըստ ձեւի՝ այդ փոքրի տեղը բրոշիւրային գրականութիւնը չէ։ Ըստ էութեան՝ երկ բոլշեվիզմի գոյութիւնը արդարացնում է Ռուսաստանում, ինչո՞ւ չպէտք է արդարացի եւ Հայաստանում։ Ինչ է Ռուբէնի վերագնահատութեան իիմքը — խորհրդային իշխանութեան երկարատեւ գոյութեան փաստը։ Նման փաստով կարելի է արդարացնել ամէն բռնապետութիւն։ Արդիւ Համբիդի իշխանութիւնը 30 տարուց աւելի չտեւեց... Նոյն արամարանութեամբ կարելի է արդարացնել եւ Հայաստանի բոլշեվիզմի գոյութիւնը։ Այստեղից՝ մէկ քայլ գէպի Քաջազնունին։ «Բոլշեվիկները մեր բնական ժառանգներն են»...

Դաշնակցութեան տեսակետը նիշտ դրա հակառակն է։

Յ. Վ. Պ.

ԳԱՐԵԳԻՆ ԵՊ. ՏՐՍ.ՊԻԶՈՆԻ — ԽՍ.ՉԱ.ՏՐԵԱՆ՝ «Աշխարհի լոյսն ի հայս կամ Աւետարանի լոյսը Հայաստանեայց Եկեղեցւոյ պրիսմակէն» — Ա. հատոր, Փարիզ, 1936.

Ցառաջարանի մէջ հեղինակը այսպէս է ձեւակերպում իր աշխատութեան նըսպատակը՝ «ներկայ համեստ ձեռնարկը նպատակ ունեցած է քրիստոնէական կրօնի ազգայնացած կամ հայացած, բայց ո՛չ համարդկային իր կենդանի շունչէն դատարկւած ռգին ցալացնել

մեր ազգային — եկեղեցական պատմութենէն քաղաքաւ դէմքերու եւ դէպքերու նկարագրութամբ եւ ասոնց վրա լոյս արձակող աստւածաշնչական հատւածներու վերլուծմամբ։ Փոքր եղած է տալ հայ — քրիստոնեայ տիպարնկարագիրը՝ իր ամեատական եւ ընկե-

բային բազմաբարդ դիմագծով, որ մարդկային հոգեկան արժեքներու ներդաշնակ միութեան դրոշմն ու կնիքն ունենայ իր վրա: Եւ այս բռլորը՝ ապրած կեամեքերու եւ փորձառութիւններու մէջ:

Հեղինակը ջանացել է հաւատարիմ միալ իր առաջադրած նպատակին: Տրւած է քրիստոնեութեան պատմութիւնը կապակցութեամբ հայ ազգային – եկեղեցական պատմութեան:

Գրքի առաջին մասը ընդգրկում է նախաքրիստոնեական շրջանը, ուր ամփոփ կերպով տեղեկութիւններ են տրւած կրոսի մասին առհասարակ: Վերլուծած է հարայէլի կրօնի Աշանակութիւնը (միաստածութիւն) եւ Անրկայացւած է հայոց հին կրօնը, որպէս բազմաստուածութիւն: Հակիրն տեղեկութիւններ են տրւած Անահիտի, Աստղիկի եւ Վահագնի մասին: Մէջքերումներ Խորեւ – նացիի պատմութենէն եւ այլն:

Երկրորդ մասը ընդգրկումէ առաքելական կամ նախապատառքչան շրջանը: Հետաքրիստութեամբ կարդացում են պատկերաւոր ոճով Ակարագրուած դրւագները Ս. Թադէոս եւ Բարքուղիմէոս առաքեալների կեամբից եւ նրանց քարոզչութիւնը Հայաստանում, օժանդակութեամբ Երկու հռչակաւոր կոյսների՝ Սանդուխտի եւ Ոգիր: Հայաստանում կատարած այդ աւանդախտան պատմական դէպքերի շնորհիւ պարզուում է եւ Թէոդորոս Սալահունիի (Աթենքոր) յուղիչ պատմութիւնը:

Սանդուխտի եւ Թէոդորոսի տիպարները տրւած են, որպէս օրինակ առաջին հայ քրիստոնեաների: Մանրամասնութեամբ տրւած է պատմութիւնը 37 կոյսներու, գլխաւորաւթեամբ Գայեանէի եւ Հռիփսիմէի, որոնք վայրագօրէն խողխողւեցին Տրդատ քագաւորի կողմից ուղարկած դատիների ձեռքով:

Պատմութեան կցւած է մեր ամենէն գեղեցիկ եւ բամաստեղծական շարականներից մէկը՝ «Անձինք նւիրեալք»:

Հասկանալի է որ զրքի մէջ առանձին սեղ է գրաւում Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատի շրջանը: Սիրով եւ խնամքով զծւած են երկուսի դէմքերը, որոնք Հայաստանը դարձրին առաջին քրիստուածութիւնը: Գործը հասնում է մինչեւ Զուիր Երէցն ու Համագասպուի Մամիկոնեանը, այսպիսով, պատմական դրւագներն ընդգրկում են Ա. դարից սկսած մինչեւ 500 թ. Երկարածգւող պատմական ժամանակաշրջանը:

Իւրաքանչիւր դրւագին կցւած են հաստածներ Աստուածաշնչից, բացատրութիւններ, ծանօթութիւններ, խորհրդածութիւններ եւ աշխարհագրական տեղեկութիւններ: Շարականները հեղինակի կողմից քարգմանած են աշխարհաբարուի: Կամ նոյն իսկ նոր հեղինակների ուսանաւորները («Առևաւորչի կանքնը»՝ Յ. Թումանեանի, «Հայաստանեայց Եկեղեցին»՝ Վ. Թէքէեանի):

Ի նկատի ունենալով, որ ձեռնարկի առաջարութիւնը ուսուցողական է, ինքը հեղինակը աշխատել է, օգտելով համերձ պատմա – ֆլունկան տեխնիկից՝ «պահել դրագներու մէջ հայ մատենագիրներուն հոգեքանական շռնչն ու ուղղութիւնը եւ զանոնք քամճարացքնող պատմագրական ռեն ու բռլամբակաւթիւնը»: Այս ձեւը՝ ընդունած նպատակի համար՝ պէտք է նկատել լաւագոյնը, քեւ, ի հարկէ, տուժած է ֆլունկան մասը:

Հատորին մէկ մասն էլ նւիրած է Հայաստանեայց Եկեղեցուն: Այսուեղ տրդած են ամփոփ տեղեկութիւններ եկեղեցու շէնքի, գաւանանքի, խորհուրդների, արարողութեանց եւ ծէսի վերաբերեալ: Իսկ Հայաստանեայց Եկեղե-

ցին տրւած է հետեւեալ բնորոշումը -

« Հայաստանեայց Եկեղեցին ընդհան-
րական է՝ զի քրիստոնէական է. ազգա-
յին է՝ զի հայկական է: Քրիստոնէական
ոգի և հայեցի տարագ: Բայց այդ ոգին
իսկ անցած է հայ կեսնիք պրիստակէն,
ձեւացնեով ծիստան մը՝ որ հայ - քը-
րիստոնէական է: Ազգային կենցագ մը՝
անհատական, ընտանեկան, ընկերային՝
աւետարանական սկզբունքներու ներ-
դործութեամբ յեղաշրջած ու վերան-
որգաւած: Ազգային ոգի մը՝ քրիստո-
նէական շունչով ընդլայնած ու ընդ -
հանրացած: — Ահա՝ մեր Եկեղեցին:
Մեր Եկեղեցին՝ իր էութեան խորք»:

Այս բնորոշման ընդհանուր գծերը նիշտ են, մանաւանդ որպէս տեսական վերլուծում կամ առաջադրում: Սա-
կայն, Հայ Եկեղեցու կատարած քա-
ղաքական և վարչական դերը աւելա-
ցել են նրա վրա մի շարք ուրիշ յատ-
կանիշներ, որ դժւար է սեղմել մէկ քը-
նորոշման մէջ:

Հատորի գլխաւոր քերութիւնը պէտք
է համարել գիտական սիստեմի պակա-
սը: Տեղ - տեղ կայ նիւրի խոսդում,
մանաւանդ մեկնարանութիւնների և
խորիքածութիւնների բաժնում:

Պատմական դրւագներից ամենից յա-
շողը պէտք է համարել կուսաւորչի և

Մեծն Ներսէսի շրջանը: Ճիգ քափւած
է տալ Գրիգոր Լուսաւորչի, Տրդասի
և Ներսէսի նկարագիրները, նրանց
առաջադրած նպատակների պարզա-
բանումը: Յատկապէս այս դրւագների
մէջ պատմարանը եւ քրիստոնեայց Եկե-
ղեցականը գտնուում են սերտ համագոր-
ծակցութեան մէջ:

Հայերի մէջ եղած են տարակարծու-
թիւններ՝ արդեօֆ քրիստոնէութեան
մուտքը դրական դեր կատարեց, քէ՞
բացասական: Այս հարցի պատասխանը
սփուած է աշխատութեան զամազան մա-
սերում: Հեղինակը գտնում է, որ միայն
քրիստոնէութեան շնորհիւ հայ ազգը
հնարաւորութիւն ստացաւ պաշտպանե-
լու և զարգացնելու իր ուրոյն մշա-
կոյքը, իբրեւ հակադրութիւն պարս-
կականնին: Հեղինակը պնդում է նոյն-
պէս, որ Գրիգոր Լուսաւորչը յատուկ
նպառակ էր հետապնդում՝ հաստանել
Հայաստանի մէջ արեւմտեան քաղաքա-
կրութիւն: Բացի դրանից, քրիստո-
նէութեան շնորհիւ ուժեղացաւ հայ ժո-
ղովրդի բարոյական նկարագիրը:

Առ հասարակ, պատմական դրւագնե-
րը տրւած են կենդանի և մատչելի ձե-
ւով և հետաքրքրութեամբ են կար-
դացում:

Ս. ԱՐԱՄՆԱՆ